

**«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների
դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագրի շրջանակներում**

**«Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից
իրականացվող միջոցառումների վերաբերյալ**

<<Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովման>> ծրագրի նպատակն է՝ ուսուցիչների և ուսուցչի օգնականների ներառող դասավանդման հմտությունների զարգացման ապահովում՝ վերապատրաստման և շարունակական աջակցման մեթոդաբանությամբ: Ծրագրի շրջանակներում վերապատրաստվում են Շիրակի, Արագածոտնի մարզի և Երևան քաղաքի ուսուցիչներն ու ուսուցչի օգնականները:

Ողջ ծրագրի ընթացքում՝ մինչև 2020թ.-ի ավարտը, նախատեսված է վերապատրաստել 120 դպրոցի շուրջ 2000 ուսուցիչ և ուսուցչի օգնականներ: Ծրագրի իրականացումը պայմանականորեն բաժանվել է 3 փուլի

Ծրագրի առաջին փուլը սկսվել է 2019 թ.-ի դեկտեմբերի 1-ին և ավարտվել է 2020թ.-ի մարտի 31-ին:

Առաջին փուլում 52 մենթորի կողմից աջակցություն են ստացել **37** դպրոց, որից **Շիրակի մարզում՝ 6, Արագածոտնի մարզում՝ 3, 28-ը՝ ք. Երևանում**: Այս փուլում վերապատրաստվել և իրենց դասավանդման կարողություններն են զարգացրել 920 ուսուցիչ: Ծրագրում ընդգրկված 31 դպրոցում մեկնարկը տրվել է դեկտեմբեր ամսին, իսկ 6 –ում՝ հունվարին:

Առաջին փուլում վերապատրաստվել են շուրջ 950 ուսուցիչ, իսկ նրանցից 920 -ը ստացել է շարունակական աջակցություն:

Երկրորդ փուլի իրականացումը սկսվել է 2020 թվականի ապրիլի 17-ին եւ դադարեցվել է մայիսի 31-ին: Երկրորդ փուլը կվերսկսվի սեպտեմբերին:

Այս փուլում ընդգրկված են **52** դպրոց, որից **40-ը** ք. Երևանում, **8-ը`** Շիրակի մարզում, **4-ը`** Արագածոտնի մարզում: Յուրաքանչյուր դպրոցի հետ համագործակցում է մեկ մենթոր:

Երկրորդ փուլում ընդգրկվել են հետևյալ դպրոցները.

1. **Ք. Երևանում` Հակոբ Կոջոյանի անվան կրթահամալիր, <<Վարդանանց ասպետներ>>** թիվ 106, թիվ 24, 61, 77, 63, 87, 128, 134, 151, 171, 172, 175, 8, 38, 66, 34, 2, 35, 4, 10, 179, 80, 131, 19, 67, 75, 155, 158, 71, 74, 51, 121, 12, 146, 31, 89, 52, 56 և 188:

2. **Շիրակի մարզում` Ագատանի միջնակարգ դպրոց, ք. Գյումրիի <<Օյունջյան դպրոց- վարժարան>>**, թիվ 11, 7, 27, 24, 23 և 25:

3. **Արագածոտնի մարզում` Մուղնիի Մ. Աշճյանի անվան հիմն. դպրոց, Ծաղկաշենի միջն. դպրոց, ք. Աշտարակի թիվ 4 և թիվ 1:**

Երկրորդ փուլում վերապատրաստվել են 1772 ուսուցիչ, իսկ նրանցից 995-ը ստացել է շարունակական աջակցություն:

Հաշվետու ժամանակահատվածում մենթորների կողմից իրականացվել է իրենց գործառույթներին համապատասխան բոլոր գործողությունները վերապատրաստում, դասալսում, դասի պլանավորում եւ վերլուծություն: 2020 թ.-ի մարտի 16-ից մինչև մայիսի 31-ը, երկրում տիրող իրավիճակով պայմանավորված, մենթորները դպրոցների հետ համագործակցել են հեռավար հարթակների օգնությամբ:


Ծրագրի շրջանակում որակի վերահսկման և ծրագրի արդյունքների վերլուծության նպատակով իրականացվել է նաև մշտադիտարկման գործիքակազմի ու ժամանակացույցի մշակման եւ մշտադիտարկման աշխատանքներ: Մշտադիտարկումն իրականացվել է 4 մենթոր-մշտադիտարկողի եւ 5 մշտադիտարկողի կողմից:

Հունիսի 1-ից ծրագրի մենթորական և մշտադիտարկման աշխատանքները ժամանակավոր դադարեցված են և շարունակվելու են նոր ուսումնական տարում:

Կենտրոնի
անվանումը՝

«Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն»
ՊՈԱԿ

Տնօրեն՝



(սպորազրոյություն)

Ա.Սվաջյան

(անուն, ազգանուն)

Կ.Տ.

02.07.2020 թ.

